Թիֆլիսում գտնուող մեծ–բրիտանական զօրավար Ռայկրոֆտը և ֆրանսական առաքելութեան պետ գնդ. Շարդինին, Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիայի հետ ունեցած խորհրդաժողովում, պ. Ջամալեանի ներկայութեամբ, որոշեցին, որ պատերազմական գործողութիւնները անյապաղ պէտք է վերջացուեն:

Ջնայած պ. Ջամալեանի բողոքներին, զօր. Ռայկրոֆտը, գնդ. Շարդինին և Վրաստանի Հանրապետութեան նախագահ Ժորդանիան որոշեցին, որ՝

Անգլիական, ֆրանսական, վրաց ու հայկական ներկայացուցիչներից բաղկացած մի խառն յանձնախումբ, ըստ կարելւոյն շուտ, պէտք է մեկնի ճակատ, որպէսզի կեանքում իրականացնի հետևեալ պայմանները.

Յանձնախումբը որոշում է քանակը այն զօրքերի, որ վրացիները պէտք է թողնեն Բորչալուի գաւառի հիւսիսային մասում, իսկ հայերը՝ հարաւային, այլ և վրացիները՝ Ախալքալաքի գաւառում: Զօրքերը պէտք է լինեն սակաւաթիւ:

Վրաց զօրքերը պէտք է մնան իրենց գրաւած այժմեայ գծի վրա, հայ զօրքերը պէտք է նահանջեն Դսեղ—Ջալալ–Օղլի թիւրքական գիծը:

Վրացական և հայկական զօրքերի գրաւած տարածութեան միջև, երկաթուղու վրա, կը գտնուեն բրիտանական պահակներ. վարչութիւնը այս վիճելի մասում կը լինի խառն:

Ախալքալաքի գաւառի վրացական վարչութեան վրա հսկում է դաշնակիցների մի յանձնախումբ, որի մէջ մտնում են ներկայացուցիչներ և տեղական հայ ու մահմետական բնակիչներից:

Երկու պետութեան՝ Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները շուտով կուղարկուեն Եւրոպա, ուր սահմանների վերաբերող ամբողջ հարցը կը լուծուի մեծ պետութիւնների կողմից:

Իսկականը ստորագրեցին Ռայկրոֆտ, Շարդինի, Ժորդանիա: Թիֆլիս, 25 դեկտ. 1918թ.»:

Յանձնախումբը՝ բաղկացած 2 անգլիացի, 1 ֆրանսացի ու 1 վրացի սպաներից, անգլիական կապիտան Դրդլէգ Վիցերսի գլխաւորութեամբ, դեկտ. 28–ին, հասաւ Ղարաքիլիսա և հայկական հրամանատարութեան ներկայացրեց վերևի համաձայնութիւնը: Հայերը բողոքեցին ու պահանջեցին որոշ կէտեր փոխել, բայց, ի վերջոյ, անգլիացիների ճնշման տակ ստիպուած եղան համակերպուել: Հայկական կառավարութիւնը, սակայն, համաձայնութեան մի քանի կէտեր համարում էր մութ և բացատրութիւն էր պահանջում, որի վրա յանձնախմբի նախագահը համաձայնուեց իր հետ Թիֆլիս տանել հայերից երկու ներկայացուցիչ՝ մութ կէտերի վերջնական պարզաբանման համար: Բանակցութիւններից յետոյ, դեկտ.30–ին, որոշուեց, միւս օրը, դեկտ. 31–ի դիշերուայ ժամը 12–ին, վերջ տալ պատերազմական գործողութիւններին, որից յետոյ հայկական պատուիրակութիւնը պէտք է մեկնէր Թիֆլիս՝ հաշտութեան բանակցութիւնների համար:

Յանձնախմբի Ղարաքիլիսա հասնելու օրն իսկ, դեկտ. 28–ին վրացիներն ամբողջ ճակատի վրա անցան ընդհանուր յարձակման: Նրանց ուժերը աւելացել էին, մատակարարման գործը հեշտացել էր. նրանց միացել էին և Բորչալուի թուրքերը, որոնք կուի դաշտ էին հանել կամաւորական խմբեր: Ռազմագիտական տեսակէտից նահանջը վրացիներին օգտակար էր եղել.